ՀՈԴՎԱԾՆԵՐ ԵՎ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ
СТАТЬИ И СООБЩЕНИЯ

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ «ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ» ԵՐԿԻ ԺԱՆՐԱՅԻՆ ԲՆՈՒՅԹԸ

Ա. Ա. ՂԱԶԻՆՅԱՆ

Նարեկացու Մատյանի ժանրային բնույթը հատուկ քննության հարց չի դարձել։ Իրավացի չէինք լինի, սակայն, եթե ասեինք, թե գրականության պատմաբաններն ու տեսաբանները չեն փորձել պատասխանել այդ հարցին։ Բայց նրանք տվել են այնպիսի պատասխաններ, որոնք իրականում ոչ թե հարցը լուծել, այլ ավելի են խճճել։ Բանն այն է, որ առհասարակ հստակություն չկա ժանրերի և նրանց տարատեսակների գիտական բնութագրման մեջ։ Խոսքը գրական հիմնական սեռերի՝ էպոսի, լիրիկայի և դրամայի մասին չէ, այլ վերաբերում է յուրաքանչյուր սեռի տեսակներին։ «Ժանրի ըմբռնման հարցում միասնություն չկա»[1],— գրում է Է. Ջրբաշյանը։ Իսկ թե «ինչով են ժանրերը տարբերվում մեկը մյուսից, ընդհանուր ինչ սկզբունքներով պետք է տարբերակել և դասակարգել նրանց,— այս հարցի լուծումը բախվում է մեծ դժվարությունների»[2],— գրում է Գ. Պոսպելովը։ Ձծավալվելով, ասենք միայն, որ ժանրերի տարբերակման սկզբունքը պետք է որոնել նրանց տիպաբանական հատկանիշների մեջ՝ ձևի և բովանդակության, կառուցվածքի և գեղարվեստական պատկերի ստեղծման տարրերի մեջ։ Ժանրի տիպաբանական հատկանիշները ևս քարացած չեն, այլ ունեն հարաբերական կայունություն։

Մատյանի ժանրային պատկանելության խնդիրը ձևակառուցվածքային խնդիր չէ, այլ ունի ստեղծագործական հոգեբանության և գրական կողմնորոշման նշանակություն։ Ասել, թե Նարեկացին աղոթք է գրել՝ նրան կապում ենք կրոնական հոգեբանության և միջավայրի հետ, ասել, թե ողբ է գրել՝ նրան կապում ենք կյանքի և ժողովրդի հետ։ Այլ կերպ ասած՝ ժանրային բնութագիրը դառնում է բովանդակության բացահայտման, հեղինակի դեղագիտական կողմնորոշման բանալի։

Մատյանի ժանրային մեզ հայտնի ամենահին բնութագիրը տվել է Ներսես Լամբրոնացին (1155—1198 թթ.)։ Պահպանվել է 1173 թ. Լամբրոնացու գրած Նարեկացու վարքի ինքնագիր օրինակը[3]։ Խոսելով Նարեկացու գրական ժառանգության մասին, Լամբրոնացին հիշատակում է նաև նրա Մատյանը. «...սկիզբն արար եւ խաւսեցաւ ղ գ ի ր ս ա ղ ա ւ թ ի ց ըստ հայցման խնդրոյ կրանաւոր եղբարց բանս Ղե»[4]։ Նա Մատյանը կոչում է գիրք աղօթից, որ այլ կերպ կարող էր ասվել աղոթագիրք, աղոթամատյան։ Այդպես կոչելու համար Լամբրոնացին հիմք է ունեցել։ Մատյանի ընդարձակ խորագրում Նարեկացին իր երկը կոչել է մատեան ողբերգութեան, բայց նրա նպատակը տեսել է նաև

---

1 Է. Մ. Ջ ր բ ա շ յ ա ն. Գրականության տեսություն. Երևան, 1972, էջ 355։

2 Г. Н. П о с п е л о в. Теория литературы. М., 1978, с. 230.

3 Մաշտոցի անվ. Մատենադարան (ՄՄ), ձեռ. N 1568, էջ 119ա։ Տե՛ս նաև՝ Գ ա ր ե գ ի ն Ա կ ա թ ո ղ ի կ ո ս. Յիշատակարանք ձեռագրաց. Անթիլիաս, 1951, էջ 142—143։

4 Նույն տեղում, էջ 142։

այն բանի մեջ, որ նա կարող է լինել «առիթք արտասուաց, պատճառք աղաւթից»։ Եվ ոչ միայն սա։ Բուն բնագրում Նարեկացին գրում է, որ ինքը աղոթքների ձևով ոմանց համար աղերսանքներ է գրել, ոմանց համար էլ՝ բարի խրատներ, որպեսզի նրանք իր խոսքերով մշտապես դիմեն աստծուն.

Որոց ոմանց աղերս աղաչանաց և ոմանց խրատ բարեաց՝
Առ ղէմս աղաւթից այսու մատենիւ մատակարարեցի...
(Բան Գ, գ)

կամ՝

Եւ որ ոք ընթերցցի զայս աղերս ձայնի՝
Սաղթանաց գոչման՝ աղաւթից հայցման...
(Բան Ղ, ե)

և, վերջապես,

Գրեսցե՛ս աղաւթս մշտամատոյցս զայս նորընծայ տաս ողորմաղերս
Թախծագին ձայնի ողբերգարկութեան այսր մատենի։
(Բան ՀԱ, գ)

Սա էլ հիմք է դարձել, որ Մատյանը դարեր շարունակ հիշատակարաններում կոչվեր գիրք աղօթից, աղօթից մատեան, աղօթական գիրք, կտակ մաղթանաց, աղօթամատոյց գիրք և այլն։ Ըստ այս ավանդույթի՝ Մատյանի առաջին տպագրությունը (Կ. Պոլիս, 1700—1702 թթ.) ունի «Գիրք աղօթից սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ հոգեկիր հեատորի» խորագիրը, որը պահպանվել է մի շարք վերահրատարակությունների մեջ[5]։ Թվում է՝ տրամաբանական է Մատյանն անվանել աղոթքների գիրք, աղոթամատյան և, իսկապես, այդպես էլ կոչել են Հ. Նալյանը[6], Գ. Ավետիքյանը[7], Ղ. Ալիշանը[8], Գ. Զարբհանալյանը[9], Թ. Գուշակյանը[10], Ի. Քեշիշյանը և շատ ուրիշներ։ Բանն այն է, որ դեռևս քրիստոնեության հաղթանակի առաջին դարերից սկսած՝ եկեղեցու հայրերը համոզված էին, որ մարդու ողջ հոգևոր էությունը, նրա հոգու բոլոր ուժերը, նրա ողջ հուզական և զեղարվեստական փորձը պետք է ուղղված լինեն աստծուն ճանաչելու, նրան մոտենալու, նրա հետ հաղորդվելու, նրա հետ ձուլվելու նպատակին։ Ուստի նրանց համար գեղարվեստական ստեղծագործության բարձրագույն ձևը դառնում է աղոթքը, սրտի խորքերից բխած խոսքն առ աստված։ «Աղոթքը դառնում է քրիստոնեական գրական ստեղծագործության կարևոր ժանրը։ Նա ակտիվորեն ազդել է վաղ քրիստոնեական և միջնադարյան արվեստի բոլոր տեսակների և ժանրերի բնույթի վրա, որոշել պաշտամունքային ողջ գործողության առանձնահատուկ, աղոթական տրամադրությունը»[11],— գրել է Վիկտոր Բիչկովը՝ ուշ անտիկ շրջանի գեղագիտությանը նվիրված իր մեծարժեք աշխատության մեջ։ Բայց եթե «աղոթքի մեջ ավելի լավ է ունենալ սիրտ մը առանց խոսքերու, քան թե խոսքեր առանց սրտի»[12] կամ,

5 Տե՛ս Հայկական նոր մատենագիտություն և հանրագիտարան նոր կյանքի, կազմեց Հ. Արսեն Ղազարոս Ղազիկյան. հ. Ա, Վենետիկ, 1909/1912, էջ 471—499։

6 Հ. Նալյան. Մեկնութիւն աղօթից և ներբողենաց սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ. Կ. Պոլիս, 1745։

7 Գ. Ավետիքյան. Նարեկ աղօթից համառօտ և զգուշաւոր լուծմամբք, բացայայտեալ մխանգամ և այժմ երկրորդ անգամ յաւելուածով. Վենետիկ, 1827, էջ ժա և հտ.։

8 Ղ. Ալիշան. Հայապատում. Վենետիկ, 1901, մասն Ա, էջ 88։

9 Գ. Զարբհանալյան. Պատմություն հայերեն դպրության. Վենետիկ, 1865, հ. Ա, էջ 443։

10 Թ. Գուշակյան գրել է. «Աղոթքի գիրք մը, բասին ամենեն աղնվական առումովը, ու նույն ատեն գրական հրաշակերտ մը. մեր սփոփանքը և մեր հպարտությունն է ան» (Նարեկ աղոթամատյան սուրբ Գրիգորի Նարեկացվո, արդի հայերենի վերածեց Թորգոմ եպիսկոպոս. Կահիրե, 1926, էջ ղ)։

11 В. В. Бычков. Эстетика поздней античности. М., 1981, с. 208—209.

12 Գր. Սաֆարյան. Գրիգոր Նարեկացի և իր Նարեկ Աղոթամատյանը. Ֆրեզնո, 1951, էջ 21։

Նարեկացու արտահայտությամբ՝ «զհառաչ հոգւոյ եւ զազդումն շնչոց հեծութեան» (Բան Ի, գ), և որքան էլ աստծուն հաճելի լինի սրտի լռության ձայնը, որովհետև նա «գործովք միայն գրաւի եւ ոչ ստեղծաբանութեամբ կաշառի» (Բան Բ, ա), ապա սա վերաբերում է լուռ աղոթարարին և ոչ թե բանաստեղծին։ Գրավոր աղոթքը, աստծուց առաջ, գրված է մարդու համար։ Ուստի նա պետք է գրավի հենց իր բանաստեղծականությամբ, գեղարվեստական ուժով ներգործելու համար մարդկանց հուզաշխարհի և հոգեբանության վրա։

Նարեկացին օգտվել է աղոթքի՝ իբրև գրական տեսակից, սակայն Մատյանը աղոթքների գիրք չէ։ Աղոթքը հավատացյալի հաղորդվելն է աստծու հետ, նրա անպատասխան երկխոսությունը աստծու հանդեպ տածած երկյուղի և բարեպաշտության, հավատի և հույսի մասին՝ նրանից շնորհ ու բարիք հայցելու և չարը խափանելու ակնկալությամբ։ Ըստ այսմ էլ աղոթքը սովորաբար երեք մաս ունի՝ ուղերձ (դիմում կամ օրհնություն), բուն նյութը (խոստովանություն կամ պատում) և խնդրվածք (մաղթանք կամ բարեխոսության աղերս)։ Աղոթքը, ավելի պարզ ասած, կարճ խնդրվածքն է, որին բնորոշ չէ ներքին միասնությունը։ Մինչդեռ Մատյանին հատուկ է զգացմունքների և մտքերի, տրամադրության և գիտակցության ներքին միասնություն։ Մատյանի յուրաքանչյուր գլուխ անկախ է հարաբերականորեն։ Իրականում տարբեր գլուխների միջև կա ներքին միասնություն։ Նրանք արձագանքում են իրար, հաջորդում միմյանց՝ չխախտելով անցման կապը։ Ներքին այդ միասնության մեջ բանաստեղծի մի հոգեվիճակ նախապատրաստում է մյուսը։ Այսպես՝ առաջին գլուխն սկսվում է ողբահեծ հառաչանքով, որ ծնվել է մեղքի գիտակցման և ահեղ դատաստանի երկյուղի ծանր ապրումներից, ապա երկրորդ գլխում անցնում է իր անձի դատապարտությանը՝ հոգին մատնելով անփարատ հուսահատության, բայց ավարտում է աստծու գթասիրությանն ապավինելով և հայցելով նրանից հոգու նորոգություն։ Երրորդ գլխում՝ արդեն տրամությունն ու երկյուղը փարատած, զվարթ հոգով օրհներգում է աստծուն, ապա անցնում իր երկի նպատակի շարադրմանը և ավարտում բանաստեղծական շնորհի սրտահույզ հայցմամբ։ Եվ իսկապես, այստեղ միայն աղոթքի տարբեր կան, մինչդեռ իրականում նրանց ներքին միասնությունը շաղկապված է թե՛ քնարական նույն տրամադրությամբ և թե՛ հոգեվիճակների անցման բնականությամբ։ Նարեկացու տարակույսն ու կասկածը, վհատությունն ու հույսը, տագնապն ու ահենչանքը, հավատն ու սերը ստեղծում են հույզերի մակընթացության այն կենդանի հորձանքը, որ խոր լարվածություն է հաղորդում երկին։ Մատյանը համակված է բանավիճային հզոր կրքով ու շնչով։

Մատյանի կառուցվածքը միատարր չէ։ Նարեկացին հաճախ է դիմում ընթերցողին, ստեղծելով կենդանի հաղորդակցման անմիջականություն։ Մի շարք գլուխների մեջ (Գ, Զ, ԺԲ, ԻԲ, ԼԸ, ԾԴ, ԿԶ, ՀԱ, ՀԲ, ՁԸ) նա խոսում է իր երկի նպատակի և նշանակության մասին, մի քանի գլուխների մեջ (ԺԵ, ԻԵ, ԻՁ, ԻԷ, ԼԲ, ԽԷ, ԿԸ)՝ իր խոսքի ոճը փոխելու, ժողովրդական ոգուն շատ քիչ են մերվում ԼԳ, ԼԴ, ՀԵ, ՂԲ և ՂԳ գլուխները, որոնք դավանաբանական-մեկնաբանական բնույթ ունեն։

Մատյանը հայտնի է նաև Նարեկ անունով։ Հնագույն վկայությունը հայտնի է Նարեկացու վարքի մի տարբերակից, որ տեղ է գտել Վանական վարդապետի աշակերտ Տեր Իսրայելի խմբագրած Հայսմավուրքում[13]։ Կա Հայսմավուրքի հնագույն մի ընդօրինակություն՝ գրված 1309 թ.։ Նշանակում է՝ Նարեկ անվանումը գալիս է XIII դարի երկրորդ կեսից։ Ահա այդ վկայությունը. «Եւ օր քան զօր առաւելեալ ի մշտամռունչ աղօթս՝ յօրինեաց զհրաշալի գիրս աղօթից, որ յանուն տեղւոյն Նարեկ կոչի»[14]։ 1774 թ. Կ. Պոլսի տը-

---

13 Տե՛ս Յասմաւուրք ըստ կարգի ընտրելագոյն օրինակի Յայսմաւուրաց Տէր Իսրայէլի. Կ. Պոլիս, 1834, «Յառաջաբան»։

14 Նույն տեղում, էջ 99։

պագրությունը խորագրված է՝ «Նարեկ. Գիրք աղօթից սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ հոգեկիր հռետորի», իսկ 1789 թ. Վենետիկի տպագրությունը՝ «Սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Նարեկացւոյ Գիրք աղօթից, որ կոչի Նարեկ»։ Վենետիկի 1840 թ. հրատարակության տիտղոսաթերթն այսպես է՝ «Գրիգորի Նարեկայ վանից վանականի Մատեան ողբերգութեան»։ Ընդգծված բառերը Նարեկացու երկի խորագրից են և կարծում ենք ավելի ճիշտ են արտահայտում Մատյանի ժանրային բնույթը։

Մատյանի ժանրային բնույթին առաջին անգամ քիչ թե շատ հանգամանորեն անդրադարձել է Ա. Զոպանյանը 1895 թ. գրած «Գրիգոր Նարեկացի» ուսումնասիրության մեջ։ Գտնելով, որ «ամբողջ միստիկականություն է այդ գործը, և ամբողջ քնարերգություն», նա Մատյանը կոչում է «միստիկականության ցավագին վեպ մը», ուր վեպը պարզապես համարժեք է երկ բառին։ Զոպանյանն իրավացի է, որ «Նարեկացին գրեթե միշտ կնախընտրե ներբողին քնարական ձևը», որ նրա խոսքը «աստվածաշնչական օրհներգության կամ նախնական բանաստեղծությանց գովաբանական աղոթքի ձևը կառնե»[15]։ Այլ կերպ ասած՝ Մատյանը միատարր ժանրային ստեղծագործություն չէ, այլ նրա մեջ միահյուսվել են տարբեր ժանրեր՝ աղոթք, ներբող, դրվատ, օրհներգություն և այլն։

Մ. Աբեղյանը գտնում է, որ Մատյանը «ապաշխարության երգ է և զարգացումն է ապաշխարության հոգևոր երգերի և ընդհանրապես «ողորմեա» կոչված շարականների։ Դա էլ իրոք այն տխուր ու լալահառաչ հոգևոր երգերի կատարելատիպն է, միայն ինքնահատուկ ձևով»[16]։ Աբեղյանն անուն չի տվել այդ «ինքնահատուկ ձևին»։ Իսկապես, Մատյանի քնարական հերոսի ինքնաբացահայտման ակունքները գալիս են ապաշխարության շարականներից։

Ըստ Ստ. Մալխասյանի Մատյանը «միանգամայն ինքնուրույն բանաստեղծություն է, իսկ նրա մտահղացումը, ներքին իդեան՝ բոլորովին նոր ու միակն է աշխարհի գրականության մեջ»[17]։ Մալխասյանը Մատյանը համարում է ողբերգություն՝ «իբրև ողբերի երգ կամ երգված ողբ։ Բայց այս բառը, յուր այժմյան նշանակությամբ, իբրև դրամա, նույնպես շատ լավ հարմարում է գրքին»[18]։

Ս. Մկրյանը Մատյանը համարում է «լիրիկական մեծ պոեմ»[19]. «Այն ընդհանուր գրականության մեջ եղած լիրիկական ժանրի սլեմներից թերևս ամենալիրիկականն է, որովհետև պատմողական-սյուժետային տարրը ընդհանուր կառուցվածքի մեջ բոլորովին բացակայում է, իսկ եթե առանձին գլուխներում էլ երևան է գալիս՝ աննկատելի լինելու չափ քիչ տեղ է բռնում»[20]։ Մատյանը քնարական խոհափիլիսոփայական պոեմ է համարում նաև Է. Ջրբաշյանը. «Համաշխարհային գրականության մեջ դժվար է ցույց տալ մի ուրիշ այսքան մեծ ծավալի զուտ քնարական պոեմ, որը միաժամանակ այդքան լեցուն լիներ ներքին շարժմամբ, հոգեբանական պատճառաբանված անցումներով»[21]։ Ժանրային այս բնութագիրը ստացել է միջազգային ճանաչում։ Բայց ինչպես Հոմերոսի «Իլիականը» պոեմ է անվանվում, մինչդեռ դա համարժեք չէ նրա ժանրային էությանը, այնպես էլ Նարեկացու Մատյանը, լինելով եզակի և անզուգական գործ, վերապահությամբ միայն պետք է անվանել քնարական պոեմ։ Մատյանի մասին կարելի է ասել այն, ինչ ասել է Տոլստոյն իր «Պատերազմ և խաղաղություն» էպոպեայի մասին. «Ի՞նչ է «Պատերազմ և խաղաղությունը»։ Դա վեպ չէ, առավել ևս՝ պոեմ չէ, է՛լ առավել՝ պատմական

---

15 Ա. Զոպանյան. Երկեր. Երևան, 1966, էջ 282, 283։

16 Մ. Աբեղյան. Երկեր. հ. Գ, Երևան, 1968, էջ 620։

17 Ստ. Մալխասյան. Մատենագիտական դիտողություններ. Երևան, 1961, էջ 229։

18 Նույն տեղում, էջ 230։

19 Մ. Մկրյան. Գրիգոր Նարեկացի. Երևան, 1955, էջ 168։

20 Նույն տեղում, էջ 173։

21 Է. Ջրբաշյան. Գեղագիտություն և գրականություն. Երևան, 1983, էջ 107։

քրոնիկ չէ։ «Պատերազմ և խաղաղությունը» այն է, ինչ ցանկացել և կարողացել է արտահայտել հեղինակն այն ձևի մեջ, որտեղ արտահայտված է դա»[22]։

Գեղարվեստական մտահղացումը չի կարող մարմնավորվել այլ կերպ, քան գրական որևէ ժանրի մեջ։ Եվ ինչ ժանր էլ լինի դա, նրա ձևակառուցվածքային հատկանիշների մեջ ավանդականը զուգակցվում է նորի և անհատականի հետ, կայուն հատկանիշը փոխանցվում է նորի։ Ավելի բացահայտ է դրսևորվում սեռի պատկերը։ Ժանրատեսակները կարելի է շփոթել, բայց սեռերը՝ երբեք։ Ահա թե ինչու Մատյանը որքան էլ ուրույն բնույթ ունենա, այնուամենայնիվ, քնարական ստեղծագործություն է։ Իբրև այդպիսին նա ավանդական քնարական ձևերից ոչ թե սահմանազատվում է, այլ, ընդհակառակը, խառնվում և խորացնում է դրանք, ձգտելով անխառն քնարականության։ Քնարական սեռի պատկերն այնքան հստակ է նրա մեջ, որ Զոպանյանը գրել է այսպես. «Իր աստվածաբանությունն իսկ տրամաբանող աստվածաբանություն մը չէ, այլ քնարական աստվածաբանություն մը»[23]։ Կա մի կարևոր հանգամանք ևս։ Ինչ ժանրեր էլ որ օգտագործել է Նարեկացին իր «միագո իրի հրաշակերտությունը» ստեղծելու համար, դրանց մեջ հիմնականը ողբի ժանրն է, և Մատյանն այլ բան չէ, քան ողբերի գիրք, ողբերի երգ։ Ստեփանոս Նազարյանցը այն ռուսերեն թարգմանել է էլեգիա՝ եղերերգություն[24]։

Մատյանի գեղարվեստական ձևը նախապատրաստվել է դարերով։ Նարեկացին միայն հիմք և ելակետ է ընդունել ողբը՝ ստեղծելով գեղարվեստական ինքնատիպ ժանրի երկ։ «Գեղարվեստական տեսունակության նոր ձևերը նախապատրաստվում են դանդաղ, դարերի ընթացքում,— գրել է Մ. Բախտինը,— դարաշրջանը միմիայն օպտիմալ պայմաններ է ստեղծում նոր ձևի վերջնական հասունացման և իրականացման համար»[25]։ Ողբերի գիրք գրելու համար Նարեկացու դարաշրջանն իրոք ստեղծել էր արգավանդ հող։ Դա բեկման դարաշրջան էր։ Հայաստանը թևակոխել էր ավատատիրական հարաբերությունների զարգացման նոր փուլ։ Հասարակական, տնտեսական այս վերելքը հարուցում էր նոր կենսազգացողություն։ Հումանիստական աշխարհայեցողությունը վերընձյուղում էր իր առաջին շիվերը։ Բնականաբար, սրվում էին դասակարգային հակամարտությունները։ Երկիրը ցնցվում էր թոնդրակյան ապստամբությունից։ Մ. Աբեղյանի բնորոշմամբ՝ «կրոնական էր այն դարի իշխող ոգին և ուղղությունը ոչ միայն մեր մեջ, այլև ընդհանուր աշխարհում»[26]։ Մարդու բարոյական արժեքի գնահատման չափանիշը հավատն էր, աստծու նկատմամբ ունեցած նրա վերաբերմունքը։ Անհատի ներաշխարհը ծվատվում էր հոգու և մարմնի, սատանայի և հրեշտակի, մեղքի ու քավության, դրախտի ու դժոխքի և նման այլ պատկերացումների հարուցած մտքերից ու զգացմունքներից։ Եկեղեցին ձգտում էր հաստատուն պահել աշխարհուրացության իր դաղափարախոսությունը։ Նա աղանդավորական մոլորություն էր հայտարարում ծլարձակող հումանիստական նոր աշխարհայեցողությունը, որը հակաեկեղեցական ուղղություն ուներ և փորձում էր քրիստոնեական վարդապետության սկզբունքները վերակերտել հակառակ հիմունքների վրա՝ երկնային անդո վայելքի փոխարեն փարվելով երկրային հաճույքին։ Դաղափարախոսական այս հակամարտությունը Նարեկացու դարաշրջանի էական գիծն էր։

Վերնագիրը յուրահատուկ բնույթ ունի միջնադարի դրականության մեջ։ Իբրև կանոն, այն գաղափար է տալիս ա) երկի բովանդակության, բ) գրական տեսակի, գ) հեղինակի անձի, դ) գրության ժամանակի և ե) այն անձի մասին, ում խնդրանքով կամ պատվերով գրվել է այն։ Սա ընդունված ավանդույթն է,

---

22 Л. Н. Толстой о литературе. М., 1955, с. 115.

23 Ա. Զոպանյան. նշվ. աշխ., էջ 273։

24 Ст. Назарянц. Беглый взгляд на историю гайканской литературы. Казань, 1844, с. 32.

25 М. Бахтин. Проблемы поэтики Достоевского. М., 1979, с. 43.

26 Մ. Աբեղյան. նշվ. աշխ., էջ 567։

և Մատյանի խորագիրը բավարարում է հինգ կետերից չորսին[27]։ Բովանդակությամբ Մատյանը ըստ Նարեկացու՝ ապաշավանքի օգտակար խոսքերի բազմաթախանձ դրվագներ են, հոգեշահ խրատների և զղջական կանոնների գիրք, մեղքերի խոստովանություն, հոգեկան անբուժելի վերքերի զորավոր սպեղանի, անտեսանելի ցավերի ներազդող դեղ և այլն։ Այն գրվել է ճգնակյաց անապատականների, կուսակրոն հայրերի և վանական եղբայրների խնդրանքով՝ 1002 թ.։ Իբրև գրական տեսակ՝ այդ երկը ողբերի մատյան է, ողբերի երգ, մաղթանքների և աղոթքների կտակ։ Եվ, վերջապես, Մատյանի հեղինակն է Նարեկա վանքի վանական Գրիգոր Նարեկացին։

Խորագրում Նարեկացին իր երկը կոչում է «մատեան ողբերգութեան»։ Նարեկացին մեկ անգամ չէ, որ բուն բնագրում իր երկը կոչում է մերթ ողբերգություն» մերթ՝ ողբերի մատյան, մերթ՝ ողբերգության կտակ, զուգորդելով դա մերթ աղոթքների և մաղթանքների, մերթ էլ՝ խոստովանության հետ։ Մատյանը նա համարում է նաև «համայնապատում խոստովանութիւն»։ Խոստովանությունը, սակայն, ժանրային հատկանիշ չէ։ Դա երկի այն ներքին ոգին է, որ խոր հուզականություն և ներգործման հզոր շունչ է հաղորդում նրա միասնությանը։ Նարեկացու բնութագրմամբ՝ Մատյանը ողբերի գիրք է, ողբերգության գիրք է.

Շնորհեա՛ կատարել ի քոյդ հաճութիւն, արհնեալդ ի կամաց,
Զսկզբնաւորեալ մատեան մաղթանաց այսր ողբերգութեան
(Բան Բ, բ)

Կամ՝

Ե. արդ՝ քանզի ի գլուխս կատարման հասեալ
Սակաւամանեայ կտակի այսր ողբերգութեան,
Արա՛, Տէր, վախճան դադարման առնուլ...
(Բան ՁԷ, ա)

Նման վկայություններ կան մի շարք այլ գլուխներում ևս. Դ (բ, դ), Թ (ա), ԼԴ (բ), ԾԴ (բ), Հ (գ), ՀԱ (դ), ՁԸ (բ) և այլն։ Նարեկացին Մատյանը դիմառնաբար ներկայացնում է որպես մի ձայնարկու, որ իր փոխարեն աստծու առջև միշտ պիտի խոստովանի բանաստեղծի մեղքերը.

Այս կացցէ սահման յանձնառական խոստովանութեան՝
Մշտնջենաւոր ձայնարկու առաջի քոյ, ամենակալ...
(Բան ԾԴ, դ)

Անձնավորման այս փաստից բխում է մի այլ եզրակացություն. բանաստեղծն ինքն է մինչ այդ հանդես գալիս իբրև ձայնարկու։ Սա ակներև է նրա չափազանց կարևոր մի այլ խոստովանությունից։ ԻԶ գլխում Նարեկացին հայտնում է, որ ինքը դիմում է ժողովրդական ողբի ձևին, հանգի օգտագործմանը՝ խոսքն ավելի ազդու դարձնելու համար.

Ուստի եւ բազմեալ իմ ի գլուխս պարու ակմբից դասու այնր երախանաց,

---

27 Մատյանի լրիվ վերնագիրն այսպես է. «Դրութիւնք յոգնաթախանձ բանից օգտակարաց ապաշաւանաց, հոգեշահ խրատուց անձին ստգտանաց, զղջականաց կանոնաց կենաց, կամաւորութեամբ յանձնառութեանց, մեղանաց խոստովանութեանց, ցուցմունք գաղտնեաց, տարածմունք ծածկեցելոց, յանդիմանութիւնք թագուցելոց, սպեղանիք զորաւորք՝ վիրաց անբժշկականաց, դեղք ազդողականք՝ ցաւոց անտեսականաց. հնարաւորութիւնք բազմամասնեայ երկանց վտանգից, ի դիմաց կարեաց ամենից բնութեանց առիթք արտասուաց, պատճառք աղօթից ի խնդրոյ այցման հարց միանձանց և բազմաց անապատականաց ասացեալ։ Մատեան ողբերգութեան Գրիգորի Նարեկաց վանից վանականի»։

Որք զլալեացն յեղանակեն բանաստեղծութիւն,
Եւ ես ընդ նոսին՝ նոցին հեծութեամբ.
Աւուրական ձայնարկութեամբ՝
Զանձինս տարածանեմ զվշտակրութիւն։
(Բան ԻԶ, ա)

Պարզ ասած՝ Նարեկացին ուզում է լալականների դասի պարագլխի նըման սգալ իր վշտերը։ Դառնալ ձայնարկու, ողբասացների պարագլուխ,— սա ժողովրդական ոգուն մոտենալու ներքին պահանջ չէր միայն, այլ նաև ժանրի նախընտրություն։ Եվ, իսկապես, Նարեկացին Մատյանը մտահղացել է իբրև ողբ։ Սա ակներև է նաև Երեմիայի ողբի և իր ողբի միջև տարված զուգահեռից.

Այլ ես պատմեմ աստանաւր զարձեալ ոչ զմեզոն Երուսաղեմի,
Ըստ մարգարէին հրամանաւորութեանն, որ առ ժողովուրդն նախնի,
Եւ կամ տանն Յակոբոյ զանարէնութիւնս նորա,
Այլ իմոյս ժամանեցից յայտնութեան.
Քանզի աւաղ ընդ ուղեսս մա՞ու յարելով, ըստ մարգարէին,
Սանգիմանեցից զիս ինքն ինձէն իմովս ձայնիւ, ըստ սաղմոսողին,
Որպէս զի յանձնառական յայտս համայնապաստում խոստովանութենէ՝
Ոչ կարաւտացեալ կրկնակին՝
Միանգամայն իսպառ սրբեցայց՝ աւրհնեալ հրամանաւ էիր։
(Բան ԼԲ, բ)

Զուգահեռը թափանցիկ է. երկուսն էլ ողբում են՝ մարգարեն Երուսաղեմի, բանաստեղծն իր անձի մեղքերը։ Երկուսն էլ ընտրել են գրական նույն ժանրը՝ ողբը։ Դա ժողովրդի սիրած ժանրերից մեկն էր։

Ողբը պատկանում է համաշխարհային գրականության հնագույն ժանրերի թվին։ Ծագելով թաղման և սգի ժողովրդական երգերից, ողբն արդեն գրական ուրույն ժանր էր հունա-հռոմեական անտիկ գրականության մեջ։ Ժանրի գրական զարգացման աղբյուրներից մեկն էլ Աստվածաշունչ գիրքն էր։ Ժանրը հարատևում էր նաև բյուզանդական գրականության մեջ։ Հայ մատենագրության մեջ մինչև Նարեկացին ողբը տվել էր դասական օրինակներ։ Հիշենք Մովսես Խորենացու և Դավթակ Քերթողի ողբերը։ Իբրև ժողովրդական բանահյուսության սիրված ժանր, ողբը կենդանի էր ոչ միայն Նարեկացու դարաշրջանում, այլև շատ դարեր անց։ Անշուշտ Նարեկացին ծանոթ էր նաև ողբի տեսական ըմբռնումներին։ Այլ կերպ՝ առանց անցյալի գեղարվեստական ավանդույթների յուրացման և ստեղծագործական վերակերտման, նա չէր կարող հանդել այն նոր ձևին, որն առավելապես համապատասխաներ իր մտահղացման մարմնավորմանը։ «Ժանրային ձևն անհնար է ըմբռնել նրա կենսական արմատներից դուրս, դարաշրջանի գաղափարական պայքարից, տվյալ գրողի ստեղծագործության բովանդակությունից և ոճից, գրական ավանդույթներից դուրս»[28],— գրել է Լ. Պ. Գրոսմանը։

Նարեկացու համար այդ ավանդույթները երեքն են. ա) աստվածաշնչական մարգարեությունները և այլ գրքեր, բ) ազգային գրականությունը՝ ողբեր, ապաշխարության շարականներ և այլն, գ) ժողովրդական լալյաց և այլ երգերը։ Ողբն ընդգրկում է կյանքի լայն ոլորտ և հնարավորություն է ընձեռում արձագանքելու ժամանակի հրատապ խնդիրներին, ժողովրդի հասարակական-քաղաքական բաղձանքներին ու տրամադրություններին։ Հեղինակը կարող է անկաշկանդ բացահայտել իր ներաշխարհը, արտահայտել իր խոհերն ու զգացմունքները, իր հուզական վերաբերմունքը։ Ահա թե ինչու ողբի ժանրի մեջ Նարեկացին գտել է իրեն հուզող մտքերն ու հույզերը արտահայտելու գեղարվեստական ամենակատարյալ ձևը։ Նարեկացին նոր կերպարանք է տվել

[28] Л. П. Гроссман. Поэтика Достоевского. М., 1925, с. 15.

ողբին։ Դա էլ հնարավորություն է ընձեռել պատկերելու ժամանակի մարդուն՝ ապրումների իր ողջ բարդությամբ, ժողովրդական կյանքն ու միջավայրը՝ լայն ընդգրկմամբ, արտահայտելու իր խոհերը տիեզերքի, մարդու, աստծու, կյանքի ու մահվան մասին, փիլիսոփայելու չարի և բարու, սիրո և ատելության, հույսի ու հավատի մասին, քարոզելու, ներբողելու, պարսավելու, անգամ՝ նզովք կարդալու։

Ինչ վերաբերում է ողբի տեսական ըմբռնմանը, ապա Նարեկացին ծանոթ է եղել «Պիտոյից գրքի» սահմանմանը։ Ըստ այդ սահմանման՝ ողբերգակները «զհնոցն երգելով պատմութիւնս, այնպիսի իմն ըստ նոցա քաջութեանցն զուդահաւասար և զիւրեանցն ցուցին իմաստութիւն, մինչ զի և խառնելով և քաղցրը նուագերգութիւնս ձայնիցն, և զյաջողակ խրատուցն կարգաւորութիւնս յարմարական, որով սփոփեալ զբնաւ վշտացեալ սգաւորացն մխիթարելով անձինս»[29]։ Ցավ՝ տառապանքի համար, սփոփանք՝ մխիթարելու համար,— ահա ողբի այս բանաձևը։ Քրիստոնեական աշխարհայեցողությանը խորթ էր մարդու կործանման անխուսափելիությունն ու անհույս ողբը։ Նարեկացին ծանոթ էր նաև Դիոնիսիոս Թրակացու քերականությանը և նրա հայ մեկնիչների կարծիքներին։ Ստեփանոս Սյունեցին, օրինակ, այսպես է սահմանել ողբերգությունը. «Ողբերգութիւն զմխիթարական ասէ, զորս ի վերայ մեռելոց և կամ այլ ինչ թշուառութիւն կրելոց առնեն»[30]։ Այստեղ ողբերգություն բառը համարժեք է հունարեն թրենոդիա (ողբերգ, սգերգ, ողբ) բառին և ոչ թե տրագեդիա հասկացությանը։ Նարեկացին ողբում է իր անձի թշվառությունը, իր հոգու կորուստը։ Եվ որովհետև նա շատ լավ գիտեր, որ ողբի երգին պիտի հույսի նվագ խառնել[31], ուստի Մատյանը համակված է նաև փրկության հույսի խոր լավատեսությամբ։ Ողբի տեսական ըմբռնման այդ աղերսը Նարեկացին տվել է այսպես.

Քոյին աղերսիս առ քեզ մաղթեցից,
Յարմարնալ դարձեալ ի նիւթս բանիս
Զտառ ողբերգութեան այսր մատենի,
Լցից թախծութեամբ և հեծեծանաւք։
Այլ առեալ խառնեցից ի սուղիդ հաճութիւն՝
Ընդ ցաւոցն զգեղն,
Ընդ վհատութեանն՝ զիւրախոյսն,
Ընդ յուսահատութեանն՝ զիշատակդ անուան հաստողիդ,
Ընդ սխրութեանս՝ զսփոփանսդ,
Ընդ իմումս դատնութեան՝ զքաղցրութիւն կենարարիդ,
Ընդ պատիժ աւրինին՝ զշնորհն,
Ընդ պարտս անիծիցն՝ զաղատարար աւրհնութիւնդ,
Ընդ մարմնոյ մահուն՝ զամենայնիւ նորոգութիւնդ։
(Բան ԾԳ, բ)

Ասացինք, որ Նարեկացին ուներ դասական ողբի այնպիսի օրինակ, ինչպիսին Խորենացու ողբն էր, ուր պատմահոր ծանր խոհերը սերտորեն միա-

---

29 Մ ո վ ս ե ս Խ ո ր ե ն ա ց ի. Մատենագրութիւնք. Վենետիկ, 1843, էջ 369։

30 Н. А д о н ц. Дионисий Фракийский и армянские толкователи. Петроград, 1915. с. 193.

31 Նույն տեղում, էջ 57։ Հետագայում Նսայի Նշեցին (XIII դար) ողբերգությունը բառը բացատրում է այսպես. «Ողբերգութիւն կոչի ի մերս, որ ընդ ողբսն զյուսոյն նուագսն խառնեն» (տե՛ս Ե ս ա յ ի Ն շ ե ց ի. Վերլուծութիւն քերականութեան. Երևան, 1966, էջ 72), իսկ Առաքել Սյունեցին այսպես է սահմանել ողբը. «Զի՞նչ է ողբն և զի՞նչ երգն. այսինքն՝ ողբն զլալն ասէ, իսկ երգ՝ զուրախութիւն, այսինքն՝ զի այնպիսի բան են շինել իմաստասէրքն, որ կէսն լաց է, կէսն՝ ուրախութիւն. յայն կերպն պիտի ընթեռնուլ։ Դարձեալ ողբերգութիւն, այսինքն թէ ընդ ողբն պարտ է և յուսոյն նուագն խառնել...» (ՄՄ, ձեռ. № 1100, էջ 206ա)։

ձուլված են ժամանակի հասարակական ապականվածության, բարքերի անկման քննադատության շիկացած կրքին, ուր անհատի ճակատագրի ողբերգական վիճակից նա նայում է ժողովրդի ճակատագրի ողբերգականությանը՝ հույսի շող որոնելով անհայտ գալիքում։ «Իր քնարական էջերեն ոմանց մեջ,— գրել է Ա. Չոպանյանը Խորենացու մասին,— Նարեկացիական ոճին իսկ նախագիծը տված է»[32]։ Կարելի է ավելացնել՝ ոճի և ողբի նախագիծը։

Չգտնելով ապացուցել, որ Մատյանը մտահղացվել է որպես ողբ, մենք հնում ենք այդ երկը միջնադարյան ողբերի շարքը դասելուց։ Մատյանը միանգամայն ինքնատիպ ստեղծագործություն է. հենց ինքն է իր գրական ժանրը։ Մատյանը չունի ո՞չ իր նախորդը և ո՞չ էլ իր հետնորդը՝ ուղղակի իմաստով։ Դա համադրական երկ է, և Նարեկացին չէր լինի իսկապես մեծ ու համապարփակ, եթե նրա ստեղծագործության մեջ չավարտվեր հինը և չկգբնավորվեր այն նորը, որ պիտի դառնար անձնական քնարերգության մայրուղի հայ գրականության մեջ։ Գեղարվեստական երկը չի կարող ստեղծվել նախապես տրված պատրաստի ձևերով։ Նրա արարչագործությունը լարված որոնումների, բառի ու պատկերի ստեղծման հարաշարժ ընթացք է՝ մտքերի ու զգացմունքների բուռն հորձանք։ Հանճարը միշտ էլ ժանրերը վերաձևում է ըստ իր ստեղծագործական տարերքի։ Այդպես է վարվել նաև Նարեկացին։ Նա ստեղծել է ուրույն ժանրի մի երկ, որը պայմանականորեն միայն պիտի դասել խոհափիլիսոփայական քնարական պոեմների շարքը։

ЖАНРОВАЯ ПРИРОДА «КНИГИ СКОРБНЫХ ПЕСНОПЕНИЙ» ГРИГОРА НАРЕКАЦИ

А. А. КАЗИНЯН

Резюме

Богата и сложна жанровая система средневековой армянской литературы. Жанры возникают на определенной стадии развития литературы и, сохраняя свои существенные признаки, постоянно видоизменяются в зависимости от эстетических и художественных потребностей той или иной эпохи. Цель настоящей статьи—определение жанровой природы «Книги скорбных песнопений» Григора Нарекаци (951—1003), величайшего поэта армянского средневековья. Это гениальное поэтическое творение считалось то молитвенником, то элегией, то плачем, то мистическим повествованием, то похвальным словом, то лирической или философской поэмой и т. д. Мы приходим к выводу, что каждое из этих определений в отдельности неверно с точки зрения истории развития жанра. «Книга скорбных песнопений» была задумана как плач, жанровые образцы которого имеются как в Библии (плачи пророков) и предшествующей Нарекаци армянской литературе (плач Мовсеса Хоренаци и других), так и в устном народном творчестве. Она имеет своеобразную, присущую только ей жанровую природу: это синкретическое произведение, в котором сплетаются разные жанры средневековой литературы, и лишь условно его можно назвать лирико-философской поэмой.

---

32 Ա. Չոպանյան. Գրպետն ու մարդը Մովսես Խորենացիի մեջ.—«Անահիտ», Փարիզ, 1931, № 1—2, էջ 10։